2019 թվականի փետրվարի 5-ին, Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախքի և Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդության առաջնորդարանում՝ նախագահությամբ թեմական առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի, կայացավ ընդհանուր հաշվետու ժողով, որտեղ ներկայացվեց փոխանորդության աշխատանքային և ֆինանսական հաշվետվությունը: Ժողովին մասնակցում էին փոխանորդության հոգևոր դասը և փոխանորդության գործող 4 կրթամշակութային կենտրոնների ու առաջնորդարանի աշխատակազմը:

Բացման խոսքում թեմական առաջնորդը ողջունեց ներկաներին, փոխանցեց Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսի օրհնությունը, գնահատեց հոգևոր դասի և պաշտոնեության ծառայությունը և
հրավիրեց առաջնորդարանի պաշտոնյաներին ներկայացնելու փոխանորդության 2018 թ գործունեության հաշվետվությունը:

Փոխառաջնորդարանի գործավար-քարտուղարուհի Արմենուհի Պետրոսյանը էկրանի վրա սեղմ ներկայացրեց եկեղեցիների, կենտրոնների և առաջնորդարանի լայնածավալ գործունեությունը, որից հետո փոխանորդության հաշվապահ Ռուզաննա Երեմյանը նույնպես էկրանին ներկայացրեց թեմի և Ջավախքի փոխանորդության ֆինանսական մանրամասն հաշվետվությունը:

Այնուհետև հետո տեղի ունեցավ քննարկում, որի ժամանակ ինչպես հոգևորականների, այնպես էլ պաշտոնեության կողմից հնչեցին առաջարկություններ, որոնք դրական արձագանք ունեցան առաջնորդի կողմից:

[redacted]

[redacted]